Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Գորիսի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ –ի «Հայոց պատմություն» 3 դասաժամ, «Համաշխարհային պատմություն» 2 դասաժամ, «Հասարակագիտություն» 1 դասաժամ, «Իմ հայրենիքը» 4 դասաժամ, «Իմ հայրենիքը և աշխարհը» 4 դասաժամ, «Հայոց եկեղեցու պատմություն» 2 դասաժամ, «Աշխարհագրություն» 12 դասաժամ:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
-դիմում(ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
-բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ(դիպլոմ)
-անձը հաստատող փաստաթուղթ,
-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),
-ինքնակենսագրություն(ձև 5),
Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերը ընդունվում են դեկտեմբերի 17-ից մինչև դեկտեմբերի 30-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2025թ. հունվարի 7-ին՝ ժամը 15:00-ին , Գորիսի թիվ 2 հիմնական դպրոցում, հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, Կապանի խճ. 34:
Տեղեկությունների համար զանգահարել 077031381 հեռախոսահամարով: